Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Արարատի մարզի Մարմարաշենի Ա. Բարությանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում <<Ռուսաց լեզու >> առարկայի 23 դասաժամ ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի թափուր տեղի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ըստ ՀՀԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը ,որին հավակնում է /Ձև 1/

2. Փաստաթուղթ/ դիպլոմ/ <<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան կամ որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը

4.Ինքնակենսագրություն/Ձև 4/

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի , հավաստագրերի պատճենները / դրանց առկայության դեպքում/.

6.Մեկ լուսանկար 3×4 չափի.

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:

8. Արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ.

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ-ի սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի 5-ը ներառյալ ամեն օր ժամը 9^{00}-ից 15^{00}-ը , բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա՝ 2023թ-ի հոկտեմբերի 12-ին , ժամը 15^{00}-ին , Արարատի մարզի Մարմարաշենի Ա. Բարությանի անվան միջն. դպրոցում:

Հասցեն՝ Համայնք Մարմարաշեն ,Երևան- Արտաշատ խճուղի 71:

Տեղեկությունների համար զանգահարել 093-97-64-80 հեռախոսահամարով: